<<Նոր ժամանակի կրթություն>> ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր , կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝Սուսանա Ղազարյան

Ուսումնական հաստատություն՝Հ. 123 հիմն. դպրոց

Երևան 2023

Բնությունն ամեն ինչի մասին հոգ է տարել, մեզ մնում է միայն սովորել բնությունից:

Ներածություն

Մարդկության գոյության առաջին իսկ օրվանից մենք պայքարել ենք բնության դեմ, վերափոխել ու անխնա ոչնչացրել: Բայց բնությունը միշտ էլ եղել է մարդուց խելացի, քանզի բնությունը հավերժ է, իսկ մարդ արարածը ժամանակավոր:Ժամանակը ապացուցել է մի ճշմարտություն. <<Պետք է լինել բնության հետ ներդաշնակ>>: Բնության հետ ներդաշնակ լինելու համար պետք է այն լավ ճանաչել, որպեսզի նպատակին ծառայեցնել մարդկային նոր ռեսուրսները: Երկիր մոլորակի բնական ռեսուրսների պահպանման, վերականգնման և ռացիոնալ օգտագործման չափերի ամբողջությունն, ինչպես նաև ֆլորայի և ֆաունայի բազմազանության, ընդերքի հարստության, ջրերի և մթնոլորտային օդի մաքրության պահպանումը միշտ էլ եղել է մարդկության գերխնդիրը:Բնապահպանության համաշխարհային միության տվյալներով վերջին 500 տարում ամբողջովին բնաջնջվել են կենդանիների 844 տեսակ, իսկ կաթնասունների 23%-ը և թռչունների 16%-ը կանգնած են վերացման վտանգի առաջ: Մթնոլորտի ինքնամաքրման կարողությունն արդեն մոտ է սահմանին:

Նպատակը՝ ուսումնասիրել գոյություն ունեցող խնդիրները: Խնդիրները՝ ուսումնասիրել բնապահպանական ուսուցման մեթոդները: Պարզել սովորողների, իրենց ծնողների և միջավայրի միմյանց նկատմամբ փոխազդեցությունը բնապահպանության գործընթացում:

Բնություն-մարդ փոխկապակցվածություն: Սրան օր-օրի ավելանում են համամարդկային էկոլոգիական խնդիրները՝ կլիմայական,բնապահպանական, միջավայրի աղտոտում, տեխնածին և բնական աղետներ, ջրի հիմնախնդիր, համաշխարհային օվկիանոսների հիմնախնդիրը և այլն: Սրանից զատ, բնականաբար ավելի շատ հիմնախնդիրներ կան և բոլորն էլ մարդկության համար պետք է լինեն առաջնային, որովհետև նրանք ապրում են հենց այնտեղ, որտեղ խնդիրներն օր-օրի ավելանում և շատանում են: Այնուամենայնիվ, հենվելով վերջին համաշխարհային տվյալների վրա՝առավել ազտոտվածը ջրոլորտնէ և առավել տարածվածը ջրի հիմնախնդիրը: Շատ երկրներ ունեն ջրի հիմնախնդիր:Նույնիսկ այնպիսի վիճակում են, որ բնակչության համար նախատեսված խմելու և լողանալու ջրերը չեն տարբերվում:Այսինքն նրանք կարող են նույն գետում լողանալ,այդ նույն գետից ջուր խմել : Այս տվյալները բավականին խոսուն են: Պետք է հաճախակի անցկացվեն բոլոր հաստատություններում դասընթացներ,որպեսզի դեռահասներն ավելի ռեալ պատկերացում ունենան իրենց շրջապատող բնության մասին, դրանց խնդիրների, փորձեն ինչ որ ձևով օժանդակել դրանց բարեկեցությունը: երբ դրանց մասին սկսեն շատ խոսել և ավելի լավ պատկերացում ունենան, գոնե ինչ որ չափով կավելանա բնության մասին մտածող բնակչության թիվը: Իհարկե , ոչ բոլորը կմտածեն այդ խնդիրների լուծման մասին, սակայն որոշ բարեխիղճ մարդիկ հաստատ կգտնվեն: Մեզ հարկավոր են մարդկանց խմբեր, ովքեր կունենան լավ գաղափարներ,մտքեր, ձիրք և շնորհք, որպեսզի մտածեն և հաջողության հասցնեն իրենց գաղափարները: Պետք է լուրջ մտածել՝ սկսած երեխայից, վերջացրած հասարակ քաղաքացով:Գլխավորը համախմբվածությունն է:

Գլուխ1

Բնության պահպանումը դարձել է հասարակական արտադրության նպատակ: Բնապահպանության ուսուցումը խթանում է հասարակությանը իրազեկված լինելու, սովորեցնում է անհատներին քննադատական մտածողություն, զարգացնում է անհատների խնդիրները լուծելու և որոշումներ կայացնելու հմտություններ, կարողություններ: Բնապահպանության ուսուցման հիմքը դրվում է <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի միջոցով: Փոքր հասակում ավելի հեշտ կարելի է ուսուցանել և հարգել տալ շրջակա միջավայրը: Սա ցույց է տալիս, որ բնապահպանական խնդիրները լուծելու համար պետք է ներգրավված լինեն հասարակության բոլոր խավերը:Իսկ որոնք են բնապահպանական կրթության մեթոդները՝ բանավեճ, փոքր խմբային նախագծեր,արտաքին ուսումնասիրություն, իմիտացիա և խաղ, սահիկաշարով բնապահպանական խնդիրների ներկայացում և այլն:

Գլուխ2

Այսօրվա երեխան պետք է ստանա այլ որակի և մակարդակի գիտելիք շրջակա միջավայրի մասին, քան որ պատմում են իրենց ծնողները, որովհետև յուրաքանչյուր սերունդ ունի իր պահանջները և մոտեցումը շրջակա միջավայրի նկատմամբ : Այսօր տեղեկատվական դաշտը զարգացած է և յուրաքանչյուր տեղեկատվություն շատ արագ է տարածվում: Օրինակ՝ օզոնային շերտի փոփոխությունը, գլոբալ տաքացումը,մթնոլորտ

նետված թունավոր գազերի արտանետումը, ջրային ավազանի աղտոտվածությունը, անտառհատումները և այլն: Սա նշանակում է, որ բնապահպանական խնդիրների գործընթացի մեջ պետք է ներգրավված լինեն հասարակության բոլոր խավերը:

Գլուխ3

Ըստ աշխարհի առաջատար գիտնականների կարծիքի, էկոլոգիական դաստիարակությունը այն հիմնական ոլորտներից մեկն է, որով հնարավոր է մարդու կողմից բնության նկատմամբ հասնել աշխարհի կայուն զարգացման: Սովորողների մեջ շրջակա աշխարհի հետ փոխհարաբերության կուլտուրայի պատվաստման գործում գլխավոր դերը պատկանում է դաստիարակությանը, որն ապահովում է անձի հոգևոր-բարոյական հասունացումը, բնության հետ ներդաշնակությունը: Կարևոր է նշել նաև, որ յուրաքանչյուր սերնդի փոխանցվի նաև նախորդ սերունդների կուտակած մշակութային արժեքները:

Գլուխ 4

<<Որքան լավ ճանաչենք անցյալը, այնքան հեշտ և խոր կերպով կհասկանանք ներկայի նշանակությունը>>- գրել է Մաքսիմ Գորկին: Ասենք, որ հայ երեխային իր երկիրը ճանաչել տալը եղել է Խ. Աբովյանի ինքնքաբուխ նպատակներից մեկը, բխել է մեծ լուսավորչի այն խորին համոզմունքից, որ առանց հայրենիքն իմանալու, ճանաչելու, չի կարող լինել անկեղծ հայրենասեր: Կարևոր է առաջացնել սեր ու հետաքրքրություն հայրենի երկրի նկատմամբ, նպաստել նրա

արդիական զարգացմանը և որքան հնարավոր է անապական դարձնել շրջապատը, մթնոլորտը, պատմական վայրերը, կոթողները և այլն: Բնական է, որ հնի վրա կառուցված նորը տեսնելու ցանկությունը երեխաների մեջ առաջացնում է արշավի պահանջ: Պահանջը բավարարելու համար և երեխաների ակտիվությունը ապահովելու նպատակով ուսուցիչը կկատարի որոշ նախապատրաստական աշխատանքներ, կհայտնի էքսկուրսիայի նպատակը և կհանձնարարի ուսունասիրել, գրառումներ կատարել, սահիկաշար պատրաստել և այլն:

Հայտնվելով էքսկուրսիայի վայրում, երեխաները ներկայացնում են վայրը, ցուցադրում պատրաստած աշխատանքները , ապա անցնում շրջապատի ուսումնասիրմանը, կատարում համեմատություններ, մաքրման աշխատանքներ և այլն: Այս կարգի աշխատանքները կշարժի երեխայի հետաքրքրությունը, կթողնի խորհրդավոր տպավորություն, պահպանողականություն մայր բնության նկատմամբ, սեր, հայրենասիրություն և այլն:

Միջառարկայական կապերը ապահովելու նպատակով ավելի նպատակահարմար է արշավին մասնակից դարձնել նույն դասարանի պատմության և աշխարհագրության ուսուցիչներին: Նպատակային կատարված աշխատանքը կունենա դրական արդյունք: Հենվելով դպրոցում հայ գրականության ծրագրով ուսումնասիրվող պատմավեպերի վրա՝ կարելի է կազմակերպել մի շարք հայրենագիտական և բնապահպանական աշխատանքներ: Ղազարոս Աղայանը գրելէ.<<Հիրավի,ինչքան ցանկալի բան է, որ ամեն ոք ծանոթ լինի յուր հայրենիքին, գիտենա, թե նրա որ անկյունում ինչ կա, ինչ սար, ինչ ձոր, ինչ դաշտ,ինչ գետ,ինչ օդ, ինչ հնություն կամ նորություն, ինչպես են ապրում յուր հայրենակիցները, ինչ գործի են,ինչ վիճակի մեջ>>:

Ուսունասիրելով գոյություն ունեցող բնապահպանական հիմնախնդիրները՝ պարզվեց, որ բնապահպանական խնդիրները բազմաթիվ ու բազմազան են, տարաբնույթ:Ուստի՝բնապահպանական ճիշտ կրթությունը կօգնի սովորողներին՝ ազդելու իրենց ծնողների , շրջապատի մարդկանց վրա: Ստացված գիտելիքի և

համախմբված աշխատանքի արդյունքում կունենանք ցանկալի արդյունք. այն է՝սովորողը կդառնա բնապահպանական հիմնախնդիրների լուծման ակտիվ մասնակից: Նա հոգ կտանի մայր բնության մասին, կպահպանի այն: Բնապահպանական կրթությունը և դաստիարակությունը պետք է անցնի բնաճանաչողությունից դեպի բնասիրություն,ապա՝բնապահպանություն: Բնապահպանական կրթությունն ու դաստիարակությունը բազմակողմանի մի գործընթաց է, որն իր մեջ ընդգրկում է ոչ միայն բնապահպանական, այլև աշխարհաճանաչողական , բարոյահոգեբանական, քաղաքական և շատ այլ նկատառումներ, որի հիմնական նպատակը սովորողների մեջ բնության նկատմամբ մշտական խնամքի անհրաժեշտության գիտակցումն է: Հասարակության վերակառուցումը, նոր տնտեսական հարաբերություններն այսօր իրենց պահանջներն են առաջադրում ժամանակակից դպրոցին, և արդի մանկավարժական նոր խնդիրների թվին ավելանում է դպրոցականների՝բնության նկատմամբ պարտքի և պատասխանատվության զգացման, իրավունքի և վերաբերմունքի ձևավորման ու զարգացման խնդիրը, որոնց լուծումը պայմանավորված է մի շարք օբեկտիվ և սուբեկտիվ գործոններով: Բնության, նրա օրենքների ճ անաչողությունը, նրա դաստիարակչական դերի բարձրացումը հասարակական կյանքի օբեկտիվ օրինաչափություններից մեկն է: Պատմական զարգացման այս փուլում կարևորվում է նաև սոցիալական խնդիրների՝ որպես սուբեկտիվ գործոնի դերը: Բնության պահպանումը դարձել է հասարակական արտադրության նպատակ և սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղություններից մեկը, սակայն կա այդ գործընթացը կանխող մի հանգամանք, որ երկար ժամանակ անտեսվել է՝ բնաճանաչողությունն է, շրջապատող կենսոլորտի օրինաչափությունների և օրենքների իմացությունը:Անշուշտ,եթե մարդը լավ ճանաչի բնությունը, նրա կորուստները ավելի քիչ կլիներ:

Այսօր մեզ խիստ անհրաժեշտ է վերադառնալ հայ դպրոցի բնապահպանական, բնադաստիարակչական ակունքներին և լրջորեն զբաղվել դպրոցականների էկոլոգիական դաստիարակությամբ, որովհետև մեզ մոտ զգացվում է դրա կարիքը:

Էկոլոգիական դաստիարակությունը տարրական կրթության համակարգում կրում է ուսուցողական, հիմնական դպրոցում՝ վերլուծական, իսկ ավագ դպրոցում՝ պրոբլեմային մակարդակ:

Կրթությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու և մատուցված նյութը սովորողի սեփականությունը դարձնելու նպատակով կիրառվում են բազմաթիվ լաբորատոր- գործնական աշխատանքներ՝շրջապատող միջավայրում գտնվող կենդանի օրգանիզմների զննում, դիտարկում, մանրադիտակային հետազոտում, ուսումնական ճամփորդությունների կազմակերպում: Բնապահպանական դաստիարակությունը պետք է անցնի բնաճանաչողությունից դեպի բնասիրություն, ապա՝բնապահպանություն: Բնապահպանական կրթությունը սովորեցնում է անհատներին, թե ինչպես կշռադատել հարցի տարբեր կողմերը քննադատական մտածողության միջոցով,և այն ուժեղացնում է իրենց սեփական խնդիրները լուծելու և որոշումներ կայացնելու հմտությունները: Այդ իսկ պատճառով, շրջակա միջավայրի պահպանման ուսուցումը շատ ավելի կարևոր է, քան շրջակա միջավայրի մասին զուտ տեղեկացված լինելը: Իսկ որոնք են բնապահպանական կրթության մեթոդները: / Բնապահպանական դաստիարակության արդյունավետ մեթոդ է բանավեճը, որի թեման ընտրվում է՝ հաշվի առնելով սովորողների բնապահպանական գիտելիքների յուրացվածության մակարդակը, ակտիվությունը, դրդապատճառների ձևավորվածությունը: Բանավեճն առավելապես նպատակաուղղված է սովորողների ինքնուրույնության, ճանաչողական հետաքրքրությունների և էկոլոգիապես անվտանգ պրակտիկ գործունեության խթանմանը: Հաջորդ կարևոր մեթոդներից է փոքր խմբային նախագծերը, որոնց ընթացքում դասարանի աշակերտները դասակարգվում են փոքր խմբերի և յուրաքանչյուր խմբին տրվում է որոշակի նախագիծ, և յուրաքանչյուր խմբի աշակերտները համապատասխանաբար աշխատում են այդ նախագծի նպատակի իրագործման վրա: Այս մեթոդի շնորհիվ սովորողները համախմբվում են մեկ գաղափարի շուրջ և ավելի արդյունավետ են իրականացնում նախագծային աշխատանքը: Քիչ պակաս հետաքրքիր մեթոդ չէ արտաքին ուսումնասիրությունը, որի ժամանակ

սովորողները դասաժամը անց են կացնում դրսում: Այդ մեթոդի նպատակն է վեր հանել իրենց միջավայրի արդիական բնապահպանական խնդիրները և սովորողների ներգրավվածությունը խնդիրների լուծման գործընթացում: Եվս մեկ մեթոդ՝ իմիտացիա և խաղ: Այս մեթոդի շնորհիվ էլ սովորողները փորձում են իրականացնել գործողություններ՝ այս կամ այն բնապահպանական խնդիրները լուծելու համար:

Բնապահպանական խնդիրը սահիկաշարով ներկայացնելը ևս լավագույն մեթոդներից է: Այն ապահովում է սովորողի անմիջական մասնակցությունը խնդրի ուսումնասիրության մեջ:

Մարդը բնության զավակն է, բնության ամենասիրուն, ամենահետաքրքիր ու ամենաբարդ ստեղծագործությունը:Առօրյա կյանքում չպետք է մոռանանք, որ բնությունը ոչ միայն ռեսուրս է, որը գործածվում է տնտեսության մեջ, այլ նաև ապրելու միջավայր է: Այդ իսկ պատճառով ամբողջ աշխարհում ստեղծվում են արգելոցներ ու ազգայյին այգիներ, անցկացվում են ամենամյա էկոլոգիական տոներ և միջոցառումներ:

Այսօր կրթական համակարգն ունի առավել բարդ առաքելություն, այն է ձևավորել սերունդ, որն ունի ինքնուրույնություն, մտածելու, վերլուծելու, եզրահանգումներ կատարելու ունակություն:Մարդկային հասարակությունը իր զարգացման ներկա փուլում բախվել է էկոլոգիական գլոբալ խնդիրների հետ:Շատ գիտնականներ, փիլիսոփաներ, քաղաքականագետներ իրենց աշխատություններում վերլուծում են պատճառները և ելք են որոնում էկոլոգիական ճգնաժամից դուրս գալու համար:

Բնապահպանական մեծ խնդիր է նաև գլոբալ տաքացումը: Ըստ համաշխարհային վիճակագրական տվյալների՝ 1981թվականից ի վեր գլոբալ տաքացման աճի տեմպերն կրկնապատկվել են: Մինչև 2040 թվականը պետք է սահմանափակել գլոբալ տաքացումը մինչև 1,5 աստիճան Ցելսիուս, այլապես ամբողջ աշխարհը կնշանավորվի ամենավատ, ավերիչ հետևանքներով՝ ծայրահեղ երաշտներ, անտառային հրդեհներ,ջրհեղեղներ, արևադարձային փոթորիկներ և այլ աղետներ, որոնք միասին կոչվում են կլիմայի

փոփոխություն: Այստեղից ենթադրություն՝ դպրոց ավարտողը պետք է ունենա դրական վերաբերմունք կենդանի բնության, սեփական առողջության և այլ մարդկանց առողջության նկատմամբ և գիտակցի առողջ ապրելակերպի նորմերի պահպանման անհրաժեշտություն:

Եզրակացություն՝

Դպրոցի առօրյայում բնապահպանական և էկոլոգիական դաստիարակությունը իրողություն դարձնելը դպրոցական կյանքի բոլոր կողմերի գործառույթն է: Այս պարագայում իրենց տեղն ու դերը պիտի ունենան կրթական համակարգի բոլոր օղակները՝ նախադպրոցական հիմնարկները, դպրոցը, բարձրագույն ուսումնական հաստատությունները և ողջ հասարակությունը: Բնապահպանական դաստիարակությունը պատասխանատվության դաստիարակում է: Այն պետք է անցնի բնաճանաչողությունից դեպի բնասիրություն, ապա բնապահպանություն:

Գրականություն՝

1.Ամիրջանյան Յու. Ա., Մանկավարժություն, Երևան, 2005 թ. :

2.Ասատրյան Լ. Թ., ԱվանեսյանԼ.Գ., Սահակյան Ա. Ս. <<Էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում>> Երևան,2003թ.:

3.Ղ. Աղայան, Երկեր, հ.3, 1963թ.,էջ՝144: